ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-182

Հասմիկ Պետրոսյան
Հայաստանի պատմության թանգարան
hasmikpetrosyanmuseum@gmail.com

ԳՈՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁ*

Հիմնաբառեր. գորգ, թանգարանային առարկա, վերականգնում, կոնսերվացում, միջամտության սկզբունքներ, միջազգային փորձ, ՀՀ թանգարաններ:

Ներածություն

Դասական համարվող թանգարանների գործունեության առանցքը թանգարանային հավաքածուներն են: Թանգարանագիտության զարգացումներից և առաջ եկած տեսություններից անկախ՝ թանգարանի հիմնական խնդիրներից մեկը մշակութային ժառանգության պահպանումն է: Այս գործառույթն իրականացնելու համար թանգարանը և թանգարանային առարկան «ներգրավվում» են ոչ անմիջական (պահպանության պայմանների ապահովում) և անմիջական գործողությունների (օրինակ՝ վերականգնում) մեջ: Նպատակը՝ առարկայի «երկարակեցության» ապահովումն է: Խավավոր գործվածքը (գորգ), կախված նյութից, համարվում է ազգագրական հավաքածուների ամենաղյուրազգաց առարկաներից մեկը: Հայաստանյան հետազոտողներից գործվածքի պահպանության պայմաններին անդրադարձել են Սվետլանա Պողոսյանը, Արուս Ասատրյանը՝ ներկայացնելով Հայոց ազգագրության թանգարանի (այսուհետ՝ ՀԱԹ) փորձառությունը (Պողոսյան, Ասատրյան 2011, 75–83) և Լիանա Գևորգյանը (Գևորգյան 2013, 126–134)՝ պահպանման միջավայրում վտանգներին, դրանց կանխարգելման խնդիրներին: Սույն հոդվածը հայաստանյան թանգարանային միջավայրում գորգի կառուցվածքին անմիջական միջամտություններ կատարելու փորձառության մասին է:

Պահպանության և միջամտության սկզբունքների մասին սահմանումներ արվել են մշակութային ժառանգության կոնսերվացիայի ինստիտուտների, ոլորտի խորհրդատու կառույցների կողմից (CCI, AIC, ICOM, ICON): Գորգի, որպես սկզբնաղբյուրի, հետազոտության, պահպանության և միջամտությունների ուսումնասիրման առաջին փորձերն արվել են Արևմուտքում՝ դիտարկելով «Արևելյան գորգերի» հավաքածուները: Չնայած ընդհանրական անվանմանը («Արևելյան գորգեր»), խմբի մեջ ընդգրկված առարկաները հատկանիշներով տարբեր են: Օրինակ՝ թուրքմենական բամբակե և հայկական բրդե գորգի վնասվելու հակվածությունը, վնասվածքի տեխնիկական պատկերը, միջամտության մեթոդները չեն

* Ստացվել է 30.04.2023թ., ուղարկվել է գրախոսման 02.05.2023 թ., ընդունվել է տպագրության 07.07.2023 թ.:

կրկնում միմյանց: Այնուամենայնիվ՝ դրանց, որպես մշակութային ժառանգություն հանդիսացող «թանգարանային առարկա», միջամտությունների սկզբունքները, սահմանները, կարող են լինել ընդհանուր, օրինակելի, դրանց հետևելն՝ առավել նպատակահարմար:

Հոդվածի առաջին հատվածում ընդհանուր գծերով նկարագրված են ոլորտի մասնագիտացած կառույցների առաջադրած մոտեցումները և գործողությունների սկզբունքները: Միջամտության մեթոդի տարբերությունից զատ, առարկայի ընկալումները և դրանից կախված միջամտության սկզբունքները ժամանակի ու տարածության մեջ նույնպես տարբեր են: Օրինակ՝ թանգարանային միջավայրում գորգի նկատմամբ միջամտությունների ժամանակակի՛ց և մեկ դար առա՛ջ գործող փորձառությունը, և այսօր՝ թանգարանների,՛ և մասնավո՛ր շրջանակների պրակտիկաները՝ նկատելի, որակական տարբերություններ ունեն: Մեր դիտարկած կոնսերվացիայի ինստիտուտների ժամանակակից փորձում էական է համարվում առարկայի նկատմամբ նվազագույն միջամտությունների դիմելը, բնօրինակ հատվածների ամբողջականությունը պահպանելը և հետևելը դարձելիության սկզբունքին: Կարճ ասած՝ առարկայից «վերցնել» և «ներդնել» նվազագույնը: Բազմաթիվ են այն թանգարանները, որտեղ առավել հակված են գորգը ամրակարել այլ կտորի վրա, ցուցադրել անգամ վնասված հատվածներով, բայց անմիջականորեն չմիջամտել գորգի տեխնիկական կառուցվածքին:

Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդերում պահպանվում են 4500-ից ավելի գորգերի օրինակներ[1]: Հոդվածի երկրորդ հատվածը վերաբերում է գորգի վերականգնման հայաստանյան ավելի քան երեսնամյա փորձառությանը: Դիտարկել ենք գորգի խոշոր հավաքածուներ ունեցող ՀՀ 17 թանգարաններ, հարցազրույցներ ենք անցկացրել գորգի վերականգնման փորձառություն ունեցող մեկ տասնյակ վերականգնողների (աղյուսակ 1) (այստեղ չենք ընդգրկել ոչ թանգարանային առարկայի վերականգնման փորձառություն ունեցող գորգի վերականգնողների պրակտիկաները, չնայած մասնագետներից շատերը նաև մասնավոր ոլորտում աշխատանքի փորձառություն ունեն) և առարկայի/թեմայի հետ տարբեր առնչություններ ունեցող ոլորտի 27 ներկայացուցիչների հետ (աղյուսակ 2): Թանգարանների աշխատակիցների՝ գորգի միջամտության փորձառության մասին հաղորդումների, գորգի վերականգնողների կողմից արված աշխատանքի նկարագրությունների միջոցով փորձել ենք առաջին պլան բերել թանգարաններում վերականգնման լաբորատորիաների կազմակերպման և ձևավորման ու գործունեության պատմությունները, որդեգրած սկզբունքները, գորգի վերականգնողների գիտելիքների ձեռքբերման եղանակները: Հոդվածի շարադրման նպատակների մեջ չի մտնում նկարագրել գործածված մեթոդները, ուստի այս հարցին անդրադարձել ենք նվազագույն նկարագրություններով: Հարցազրույցների արդյունքները շարադրելուց հետո՝ փոխանցել ենք հեղինակներին և թույլտվություն ստացել հրապարակելու համար: Կազմվել է ՀԱԹ (աղյուսակ 1,

1 Տվյալը մոտավոր հաշվարկներով հաղորդել է գորգագետ, պատմական գիտությունների թեկնածու Աշխունջ Պողոսյանը:

№ 1–7) և Հայաստանի պատմության թանգարանի (այսուհետ՝ ՀՊԹ) (աղյուսակ 1, № 8–10) վերականգնողների կենսագրական (կրթություն, մասնագիտական գործունեություն) տվյալների[2] և ՀՀ թանգարաններում գորգի միջամտությունների փորձառությունը պատկերող երկու աղյուսակներ:

Գորգերի միջամտությունների միջազգային փորձը, թանգարանային փիլիսոփայությունը, հայաստանյան սահմանումները

Գորգի պահպանության հարցերի լուծումների փնտրտուքը հավանաբար այնքան ժամանակ գոյություն ունի, որքան գորգը: Գորգերը հարյուրամյակներ շարունակ ոչ միայն կիրառական նշանակություն ունեն, այլ նաև առուվաճառքի առարկաներ են: Այստեղից հետևում է, որ պահպանության ընդհանուր գործողություններից բացի, պետք է առաջանային նաև առարկայի վերականգնման, տարբեր միջամտություններ իրականացնող հաստատություններ (արհեստանոցներ, լաբորատորիաներ, ինստիտուտներ), որոնք կնորոգեին, կշտկեին թանկարժեք այս առարկաների վնասված, մաշված հատվածները: Հաղորդումներից մեկի համաձայն 16-րդ դարում արդեն գոյություն ունեին գորգագործական արհեստանոցներ, որոնք մասնագիտացած վերականգնման, մշակման և այլ ծառայություններ էին մատուցում հավաքորդներին (Hutchinson 1991, 10–11):

Միջնադարյան հայկական աղբյուրներում բազմաթիվ են հաղորդումները գործվածքի տեսակների, դրանց գործածության ձևերի մասին (Քիւրտեան 1947), որոնց միջամտությունների փորձերի մասին, սակայն, տեղեկություններ չկան: Սոցիալական այլ հարթության մեջ, գործվածքի/գորգերի պահպանության մասին հաղորդումներ առկա են 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի դաշտային ազգագրական նյութերում. «Գիւղացիներն որոշեալ օրեր ևս կիրակի են պահում, մի որևէ պատճառով: Այսպիսի տօները իրենք «հումքի» են կոչում», որոնցից էր նաև «ցեցի հումքին», որը պահում էին որպեսզի ցեցը չուտի բրդե թելերն ու գործվածքները (Լալայան 1903, 224): Գորգի թանգարանացված բազմաթիվ օրինակների միջամտությունները ցույց են տալիս կիրառման միջավայրում առարկայի արժևորման դրսևորումները. դրանք նորոգվել են (նկ. 1), ամրակայվել՝ երբեմն մեկ այլ գորգի հատվածով (նկ. 2):

Գորգերի հատկանիշները, դրանց կոնսերվացման կամ որևէ միջամտության սկզբունքներն ու մեթոդները ժամանակի և տարածության մեջ տարբեր են: Գորգեր տեղ են գտնել տարբեր հավաքածուներում, ինչից էլ հետևում է դրանց ընկալման ու մեկնաբանման ձևերի տարբերությունը. օրինակ՝ ժառանգություն կամ ձեռքբերում՝ անձնական հավաքածուներում, արվեստի գործ՝ պատկերասրահներում, «անշարժ կիրառական» առարկաներ՝ միջավայրային ցուցադրություններում, ապրանք՝ գորգավաճառների շրջանում և այլն: Այն հանգամանքը, թե ինչ միջավայրում է գտնվում գորգը, դրանից կախված՝ փոխվում է ընկալումը և դրան միջամտելու տրամաբանությունը:

---

2 Շնորհակալություն ենք հայտնում ՀՊԹ արխիվավար Նաիրա Հաջիկյանին և ՀԱԹ արխիվավար Զառա Արմենակյանին աշխատակիցների անձնական գործերի մասնագիտական որոշ դրվագներին ծանոթացնելու համար:

Փիթեր Սթոունը (Peter F. Stone) «Արևելյան գորգերի վերանորոգում» աշխատանքը սկսում է այն հարցից, թե արդյո՞ք անհրաժեշտ է վերանորոգել գորգերը: Աշխատանքում ներկայացվում է միջամտություն անելու որոշում կայացնելու վրա ազդող գործոններն ու այլընտրանքները՝ կոնսերվացիա, նորոգում, վերականգնում: «Վերականգնումը փորձ է վերադարձնել առարկան իր բնօրինակ կամ սկզբնական վիճակին» (Stone 2010, 9). սա ենթադրում է հետագա հավելումների հեռացում, կամ բացակայող հատվածների վերականգնում, կենտրոնացում՝ արտաքին տեսքի և գործառույթների վրա (ICON 2020, 1): Սարգիս և Ավետիք Կոյունյանները նշում են, որ ճշգրիտ վերականգնումը պահանջում է նույն տեսակի կենդանական, բուսական ծագման թելերի կիրառություն՝ ինչպիսին բնօրինակ գորգն է: Նույնը վերաբերում է նաև կառուցվածքային հատկանիշներին: Վերականգնման այս մոտեցման նպատակն է գորգը բերել «սկզբնական» ձևի, նյութի, ժամանակի, տեխնիկական հատկանիշների (Koyounian S., Koyounian A. 2013, 232–233): Սա գորգի միջամտության դասական տարբերակ է մասնավոր շրջանակներում: Մասնավոր՝ գաղտնիքներով լի փորձառության մեջ արհեստական «նույնացման» դրսևորում է թեյի, սուրճի լուծույթով թելերը «հնեցնելը» (Stone 2010, 62): Հայաստանյան փորձառության մեջ կիրառվում է նաև գորգի վերականգնման 1+1=1 սկզբունքը. վերականգնվող գորգի հետ նույնական հատկանիշներ ունեցող մի առարկա, օրինակ՝ կարպետ, օգտագործվում է՝ մեկի հաշվին մյուսը (գորգ) ամբողջացնելու նպատակով:

Աննա Լիվիա ՄակՔարթին նկատում է, որ հավաքորդների համար գորգի վերականգնումը (ամբողջականացումը), ներդրում է վերականգնելու առարկայի շուկայական արժեքը, որը հիմված է գորգի տեսակի, տեխնիկական և այլ հատկանիշների վրա: Արժեքը նվազում է ըստ վնասվածության չափի (McCarthy 1999, 12), ինչն էլ մասնավոր փորձում առարկային արվող միջամտությունները «թաքցնելու» գլխավոր նպատակն է: Վաշինգտոնի Գործվածքի թանգարանի (1925 թ.) հիմնադիր Ջորջ Հյուիթ Մեյերսը (George Hewitt Meyers) 20-րդ դարի սկզբին Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործվածքի խոշոր հավաքորդներից էր և գնահատում էր գործվածքի օրինակները, որպես «անանուն նկարիչների» արվեստի գործեր (The George Washington University Museum, The Textile Museum)՝ ձգտելով առարկան բերել այն վիճակի, որում եղել է նախկինում: 1950-ական թթ. նա Նյու Յորքի Բեշիր պատկերասրահից խորհուրդ է ստացել վերանորոգել գորգերը՝ եթե մտադիր է դրանք վաճառել, որովհետև դա կարող էր ավելի բարձր շահույթ ապահովել (McCarthy 1999, 12): Այժմ թանգարանը առարկաներին արվող միջամտությունների սկզբունքների հարցում առաջնորդվում է Կոնսերվացիայի Ամերիկյան ինստիտուտի (American Institute for Conservation) սահմանած էթիկայի կանոնակարգի դրույթներով և փորձառության չափանիշներով (Shabica, Lummis 2018, 18):

1910 թ. Մետրոպոլիտեն արվեստի թանգարանում Գուստավ Կոբեի (Gustav Kobbé) հեղինակած ցուցադրության մեջ՝ («Հաստոցի Ռեմբրանտները. Մետրոպոլիտեն արվեստի թանգարանի գորգերի ցուցահանդես» (“Rembrandts of the Loom: The Rug Exhibition of the Metropolitan Museum of Art”)) գորգերը ներկայացվեցին արվեստի այլ գործերի համատեքստում, որի շրջանակներում փորձ

արվեց դիտարկումներ անել առարկայի պահպանության հարցերի էթիկական կողմին (Kobbé 1910, 7–18): Գորգը, որպես արվեստի գործ դիտելու փորձում, առաջնահերթությունները տրվում էին տեսողական ամբողջականացմանը: Առարկայի ամբողջական վերականգնմանը դիմում են հայաստանյան մի շարք թանգարաններում, որոնցից մի քանիսում դրանք ներկայացված են միջավայրային ցուցադրության համատեքստում. օրինակ՝ Հովհաննես Թումանյանի թանգարանում (ք.Երևան): Թանգարանի գլխավոր ֆոնդապահ Մարինե Բաղդասարյանը, գորգի միջամտությունների որդեգրած սկզբունքի մասին մեր հարցին ի պատասխան նշում է. «առարկան հետաքրքիր է այնքանով, որ Թումանյանին է պատկանել և մեզ համար կարևոր է ամբողջացնել առարկան, վերականգնել բնակարանի ներքնատեսքը, որ Թումանյանի բնակարանը կոկիկ և գեղեցիկ լինի, ինչպես իր ժամանակ էր և իհարկե հետագա քայքայումից պաշտպանելու համար»:

Աննա Լիվիա ՄակՔարթին նշում է, որ Արևելյան գորգերի կոնսերվացման վերաբերյալ առաջին ուսումնասիրությունների փորձեր արվել են 1990-ական թթ. Վաշինգթոնի Գործվածքի թանգարանում «Արևելյան գորգերի կոնսերվացիան» (“The conservation of Oriental rugs”) թեմայով կազմակերպված գիտաժողովին:
2011 թ. Մետրոպոլիտեն Արվեստի թանգարանում գորգի հավաքածուների պահպանման մասնագետները վերանայեցին պահպանման մոտեցումները և հարցեր առաջադրվեցին. մասնավորապես՝ ի՞նչը պահպանել, ինչպե՞ս պահպանել, ինչպե՞ս պահպանել պատմական և գեղագիտական հետաքրքրությունների հավասարակշռությունը (McCarthy 1999, 30): Թանգարանային միջավայրում գորգի պահպանման (ոչ անմիջական) գործողություններից ու պայմաններից է կախված առարկայի ֆիզիկական վիճակը: Այնուամենայնիվ, միայն «օբյեկտիվ» (ջերմություն, հարաբերական խոնավություն, լույս, մանրէներ, փնասատուներ, ցուցադրման ոչ նպատակահարմար տարբերակներ) պայմանները չեն, որ պայմանավորում են գորգի վիճակի կայունությունը, առարկայի «սուբյեկտիվ» հատկանիշները նույնպես էական նշանակություն ունեն: Դրանք, հիմնականում, վերաբերում են գորգի նյութի, կառուցվածքի ոչ նպաստավոր հատկանիշներին: Մասնագետները սրանք անվանում են «բնածին արատ», որը կարող է հանգեցնել առարկայի ինքնաոչնչացմանը (Stone 2010, 10):

Կոնսերվացիայի Ամերիկյան ինստիտուտը (American Institute for Conservation) սահմանում է՝ «Կոնսերվացիան ներառում է ձեռնարկված գործողություններ՝ ուղղված մշակութային արժեքների երկարաժամկետ պահպանման ուղղությամբ: Աշխատանքները ներառում են հետազոտության, փաստաթղթավորման, կանխարգելիչ խնամքի գործողությունները՝ հիմնվելով հետազոտության և կրթության վրա» (AIC):____Գաել դե Գյուխեն (Gaël de Guichen) բացատրում է՝ կոնսերվացիան (conservation) ցանկացած ուղղակի կամ անուղղակի գործողություն է, որն ուղղված է անձեռնմխելի կամ փնասված հավաքածուների կյանքի տևողության երկարացմանը: Գորգի կոնսերվացիան ներառում է մաքրումը, ցուցադրումը, մշտական պահպանության պայմանների ապահովումը: Մինչդեռ վերականգնումը (restoration) ցանկացած մարդկային անմիջական գործողությունն է, որն ուղղված է հա-

վաքածուի վնասված օբյեկտի վերականգնմանը, իր էսթետիկ կամ (երբեմն բնօրինակ) պատմական վիճակի ապահովումը (Guichen 1999, 4–6)[3]:

Ամերիկյան կոնսերվացիայի ինստիտուտի պահպանող մասնագետների կողմից սահմանված գործողությունների ուղեցույցի 23-րդ կետում նշված է. «Կորստի փոխհատուցման ցանկացած միջամտություն պետք է արձանագրվի և պետք է լինի հայտնաբերելի ընդհանուր հետազոտության ժամանակ: Այն պետք է լինի շրջելի և չպետք է անճշտությամբ փոփոխի մշակութային արժեքի գեղագիտական, բովանդակային և ֆիզիկական հատկանիշները, հատկապես բնօրինակ նյութը հեռացնելու կամ թողարկելու միջոցով» (AIC 1994, № 23):

Դարձելիության պայմանին հակասում են այնպիսի միջամտությունները, որոնք հետագայում հեռացնելը կարող է վնասել առարկայի բնօրինակ նյութը: Կորստի փոխհատուցումը ներառում է կառուցվածքային կայունացումը և տեսողական արժեքների հավասարակշռությունը միջամտության տարբեր մակարդակներում, որոնցից երկրորդը երկրորդական է: «Պահպանողների ամենապահպանողական տեսակետն այս հարցի շուրջ հետևյալն է. ամենակարևոր պատճառը գործվածքի կարստի հավասարակշռության՝ առարկային ավելի մեծ կայունություն ապահովելն է»: Այս մոտեցման հեղինակները բնորոշեցին երևույթը՝ «մինիմալիզմը եղանակ՝ հասցեագրելու կորուստը» (“Minimalism as a way of addressing loss”) արտահայտությամբ: Մոտեցումը զարգացավ 20-րդ դարավերջին (McCarthy 1999, 30–31):

Հայաստանի Հանրապետությունը 2008 թ. Թանգարանների միջազգային խորհուրդի (ICOM) անդամ է: Կառույցի մասնագիտական վարքագծի կանոնագրքի № 2.24 «Հավաքածուի կոնսերվացիա և վերականգնում» բաժնում սահմանված է. «...հիմնական նպատակը պետք է լինի առարկայի (վիճակի) կայունացումը: Պահպանման բոլոր ընթացակարգերը պետք է փաստաթղթավորվեն և բոլոր փոփոխությունները պետք է որքան հնարավոր է հետադարձելի և հստակ տարբերակելի լինեն բնօրինակ առարկայից կամ օրինակից» (ICOM 2017, 15):

Թանգարանացված գորգերը՝ համաձայն «Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-794–21.05.2015-ԳԿ-010/0) առաջին գլխի 2-րդ հոդվածի 2-րդ կետի. «նյութական ժառանգության առարկաներ են, որոնց հատուկ հատկանիշները անհրաժեշտ են դարձնում վերջինիս պահպանումն ու ուսումնասիրումը հասարակության համար»: Նույն օրենքի նախագծի 3-րդ գլխի, 11-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերը սահմանում են.

---

3 «**Կանխարգելիչ կոնսերվացիա**» (**preventive conservation**) (այս և հաջորդ բոլոր ընդգծումները հեղինակինն են) ՝ այն գործողությունն է, որն ուղղակիորեն կիրառվում է օբյեկտի վրա՝ կանխելու կամ նվազագույնի հասցնելու վնասը կամ վատթարացումը, «**կայունացումը**» (**stabilisation**)՝ ուղղակի գործողությունն է քայքայումը ժամանակավորապես դադարեցնելու և վատթարացումը նվազագույնի հասցնելու համար, «**բուժիչ կոնսերվացիա**» (**remedial conservation**) այն գործողությունն է, որը կիրառում են օբյեկտի նկատմամբ՝ դադարեցնելու վատթարացումը և/կամ վնասը սահմանափակելու համար (ICON 2020, 4):

2) «Հավատարմագրված թանգարանի թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանությունը ապահովելու համար թանգարաններում սահմանվում է **գիտականորեն հիմնավորված պահպանության հատուկ ռեժիմ և իրականացվում է թանգարանային առարկաների և հավաքածուների կոնսերվացում (կանխարգելում), ամրակայում և վերականգնում**»:

4) «Հավատարմագրված թանգարանների թանգարանային առարկաների և հավաքածուների վերականգնողի որակավորման կարգը և չափորոշիչները, **թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանության, կոնսերվացման (կանխարգելման), ամրակայման և վերականգնման աշխատանքների իրականացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը**»:

Համաձայն նույն փաստաթղթի 5-րդ գլխի, 22-րդ հոդվածի 6-րդ «Լիազորված պետական մարմնի լիազորությունները» կետի. «ապահովում է հավատարմագրված թանգարանների թանգարանային առարկաների և հավաքածուների վերականգնումը»:

Հայաստանյան թանգարաններում գորգի միջամտության փորձի պատմությունից

ՀՀ թանգարանային ֆոնդերում ընդգրկված առարկաները ներառում են 15-րդ դարով թվագրվող գորգերից մինչև խորհրդային գորգարտադրության օրինակները: Դրանց մի մասն առօրյայում գործածված առարկաներ են, ինչը ենթադրում է պահպանվածության տարբեր մակարդակներ: Այս համատեքստում կարևոր է դիտարկել, թե գորգի հավաքածուներ ունեցող հայաստանյան թանգարանները առարկայի միջամտության ինչպիսի փորձառություն ունեն, ինչպես են դրանք ձևավորվել, փոփոխվել ժամանակի ընթացքում, և թե ինչպես են հիմնավորվում որդեգրած սկզբունքները:

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան

Արմավիրի մարզի Արաքս գյուղի մերձակայքում գտնվող ՀԱԹ-ում, որը հիմնադրվել է 1978 թ., պահպանվում է հայկական գորգերի հայաստանյան ամենամեծ հավաքածուն: Ավելի քան երկու հազար օրինակ ընդգրկող թանգարանի առաջին առարկան գորգ է եղել: Թանգարանի հիմնադրման առաջին տարիներին՝ գլխավոր ֆոնդապահ, ֆոնդերի հաշվառման և պահպանման բաժնի վարիչ (1978 թ.), գորգի հավաքածուն ձևավորող, գորգի վերականգնման լաբորատորիան նախաձեռնող, «Գեղարվեստական գործվածք» բաժնի վարիչ (1978 – 2005 թթ.), թանգարանի գիտական գծով փոխտնօրեն (1989–1996 թթ.) (ՀԱԹ արխիվ, Գիրք 2) Աշխունջ Պողոսյանի հողորդման համաձայն, գորգերի վերականգնողների և գորգի վերականգնման լաբորատորիայի ստեղծման աշխատանքները թանգարանում սկսվել են 1980-ականներին[4] և շարունակվել մինչև 2010-ական թվա-

4 Համաձայն ՀԱԹ գիտական գծով փոխտնօրեն Սվետլանա Պողոսյանի և նույն թանգա-

կանները: Ա.Պողոսյանը նշում է. «Թանգարանում ի սկզբանե առաջնային նշանակություն է տրվել թանգարանային արժեքների վերականգնման գործին: Այդ նպատակով էլ 1980-ական թվականների սկզբներին հիմնվեց թանգարանային արժեքների և առաջին հերթին գորգերի վերականգնման արվեստանոցը»: Առաջին տարիներին նշված արվեստանոցը գործել է Արաքս գյուղում գտնվող երկու «ֆինական տնակներում» (նկ. 3): Հետագայում տեղափոխվել է թանգարանի շենք, որոշ ժամանակ գործել Արագածին նայող լուսամուտի մոտ, ավելի ուշ նաև ցուցադրության մեջ (II հարկ, գորգերի սրահ), հետո արդեն առանձին սենյակում (նկ. 4):

Ակնհայտ է, որ լաբորատորիայի կայացման հարցում էական նշանակություն պետք է ունենար վերականգնող մասնագետների պատրաստման գործը: Այս մասին Ա. Պողոսյանը նշում է. «Հնաոճ գորգերի գնման խանութի (ք. Երևան) փորձառու գորգ վերականգնողները՝ տնօրեն Ռոբերտ Դանիելյանի համաձայնությամբ, սիրով իրենց վրա էին վերցրել նրանցից երկուսին այդ մասնագիտության հիմունքներն ու նրբությունները ուսուցանելու գործը: ...Արդեն 80-ականների վերջին, 1996–1997 թթ. արվեստանոցն ուներ գորգի մոտ 14–16 վերականգնողներ»: Հետագայում գիտելիքների փոխանցման գործընթացը կազմակերպվում էր լաբորատորիայում, նաև մեկ–երկու օր աշխատակիցները այցելություններ էին կատարում վերոնշյալ խանութ[5]: Մեզ հաջողվեց զրուցել լաբորատորիայի գորգի վերականգնողներ Մարինե Բազեյանի, Ալվարդ Աթանեսյանի, Քնարիկ Սարգսյանի, Գոհար Սարգսյանի, Սոֆիա Գրիգորյանի, Լիանա Գասպարյանի հետ (նրանց մասին առավել մանրամասն տե՛ս աղյուսակ 1, № 1, 2, 3, 4, 5, 6): Արաքս գյուղում այդ տարիներին եղել են «Հայգորգ» գորգարտադրող ընկերության կազմում ներգրավված տնայնագործներ, որոնց մոտ գորգի ապագա վերականգնողներից շատերը, մինչ լաբորատորիայի կազմում ընդգրկվելն, արդեն ծանոթ էին առարկային: Գորգի լաբորատորիայի վերականգնողներից Ք. և Գ. Սարգսյանները, Ս. Գրիգորյանը գորգագործություն սովորել են Ժենյա անունով մի համագյուղացուց: Մ. Բազեյանը, մինչ լաբորատորիայի կազմում ընդգրկվելը, մասնագիտական կրթության տարիներն անցկացրել էր «Հայգորգ» ընկերությունում: Վերջինիս «Գորգանկար», «Դիմանկար», «Գծանկար» առարկաները դասավանդել են գորգանկարիչներ Մակար Մնացականյանը, Միլետա Վարդանյանը և ուրիշներ: Ա. Աթանեսյանը, ով լաբորատորիայի առաջին աշխատակիցներից էր, վերականգնման գիտելիքները ստացել է համագյուղացի, լաբորատորիայի աշխատակցուհի Հասմիկ Գրիգորյա-

---

րանի արխիվավար Ջ.Արմենակյանի հաղորդման, թանգարանի արխիվում վերականգնման լաբորատորիայի հիմնադրման վերաբերյալ փաստաթղթեր առկա չեն: Ս. Պողոսյանի և գորգի վերականգնողների հիշողություններն այս մասին վերաբերում են 1980-ական թթ. վերջին:

5 Գիտելիքների փոխանցման և հմտությունների կատարելագործման աշխատանքների վերաբերյալ Ա. Պողոսյանը մի գործոն է նշում. վերականգնման դասընթացներ անցած առաջին աշխատակիցները (նաև հետագայում ընդգրկվածները) իգական սեռի ներկայացուցիչներ էին, որոնցից շատերը ամուսնությունից հետո կամ դադարում էին այս գործով զբաղվել, կամ չէին վերադառնում աշխատանքի:

նից, իսկ հետո արդեն միասին են սովորեցրել գործընկերներին[6]: Մեր զրուցակիցներից մի քանիսը նշեցին. «Մեր վարպետը եղել է Հակոբը [Հակոբ Ասպոյան]» (աղյուսակ 1, № 7), ով վերոնշյալ խանութի գորգի վերականգնող մասնագետներից էր, ումից ապագա մասնագետները սովորել են գորգ վերականգնելու և թել ներկելու հմտությունները:

Ա. Պողոսյանը հայտնում է. «Արվեստանոցի վերականգնողները՝ հատկապես խեցեղենի և փայտե առարկաների վերականգնողները, մասնագիտական վերապատրաստումներ էին անցնում Խորհրդային Միության համապատասխան առաջատար կազմակերպություններում. գնում էին, ծանոթանում էին կուտակված փորձին և իրենք էլ իրենց փորձն էին ներկայացնում: Կարճ ասած՝ գործը բարձր մակարդակի վրա էր դրված: Ծրագրել էինք ստեղծել ռեստավրացիոն կենտրոն, որն առավելապես պետք [է] մասնագիտանար գորգերի վերականգնման հետ կապված ասպարեզում և այդ առումով դառնար Հայաստանի թանգարաններում պահվող գորգերի վերականգնման և ընդհանրապես գորգերի պահպանմանն ուղղված նմանատիպ միջոցներ իրականացնող հանրապետական նշանակության կենտրոն: Օգտագործելով ոլորտում կուտակված փորձն ու տեխնոլոգիական արդիական միջոցները՝ ծրագրել էինք նաև կենտրոնը հագեցնել տեխնիկական հնարավորություններով և առավել կատարյալ ու որակյալ մակարդակի հասցնել թանգարանային արժեքների, մասնավորապես գորգերի վերականգնման գործը»:
Ինչ վերաբերում է նյութական միջոցներին, վերականգնող մասնագետները նշում են, որ թելերը ստանում էին «Հայգորգից»: Մ. Բազեյանը հիշում է. «Հենքի թելը, եթե պետք էր լինում, մենք իլիկով էինք մանում, որովհետև հիմնականում բրդե հիմք ունեին հին գորգերը, իսկ «Հայգորգում» չկար բրդից հենքի թել, «Հայգորգը» օգտագործում էր բամբակե թելեր և՛ հիմնաթելը, և՛ միջնաթելը գործելու համար: Դրա համար մենք վերցնում էինք թելը, իլիկով մանում էինք՝ ամրություն տալու համար, որպեսզի կարողանայինք վրան աշխատել»: «Հայգորգ»-ի արտադրամասում մանված թելերի գույները շատ հաճախ չէին համապատասխանում բնօրինակ առարկայի երանգներին, ինչը հակասում էր լաբորատորիայի սկզբունքներին: Անհրաժեշտ երանգներն աշխատակիցներն իրենք էին ստանում՝ բնական և արհեստական ներկանյութերով:

Գորգի վերականգնման աշխատանքի ընտրված սկզբունքի մասին մեր հարցին՝ Ա. Պողոսյանն ի պատասխան նշում է՝ «Ծայրահեղ վատ վիճակում գտնվող գորգը պարտադիր չէր, որ գնա վերականգնման՝ այս դեպքում այն ուղղակի պետք է մաքրվի, հյուսվածքն ու թելերի ամրացման համար՝ ենթարկվի քիմիական մշակման ու դրանով կասեցվի հետագա քայքայման ընթացքը: Իմ կողմից առաջնահերթ վերկանգնման էր տարվում ցուցադրության ենթակա գորգը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ծայրահեղ անբավարար վիճակում գտնվող գորգերը չցու-

6 Մեր զրուցակիցները նշեցին, որ 1988 թ. հետո գորգի վերականգնման բաժինը համալրվում է Սուգմայիթից և Գյումրիից տեղահանված իգական սեռի ներկայացուցիչներով: Գորգի վերականգնողները հիշեցին իրենց գործընկերներից մի քանիսի անունները՝ «Տոնոյան Անահիտ, Փիլոյան Անահիտ, Գրիգորյան Հասմիկ (հիմա Հոլանդիայում է), Բաշոյան Անուշ, Համարչյան Կարինե, Համարչյան Սվետլանա, Դիանա»:

ցադրվելով հանդերձ, միանգամայն հնարավոր է, որ հետազոտողների համար ունենան սկզբնաղբյուրային կարևոր նշանակություն: Այս պարագայում, ուղղակի անհրաժեշտ է իրականացնել դրա հյուսվածքի ամրացման հետ կապված միջոցառումները: Ամեն դեպքում կարևոր է, որ այցելուն կամ հետազոտողը կարողանա հասկանալ, թե գորգը, կամ թանգարանային այս կամ այն արժեքը իրենից ինչ է ներկայացնում՝ թե՛ տեխնոլոգիական առումով և թե՛ զուտ գեղազարդման համակարգերի առումով»:

Մ. Բազեյանը «Հայկական գորգի վերականգնման մեթոդները» հոդվածում մանրամասն ներկայացնում է թանգարանի վերականգնման պրակտիկան (Բազեյան 2011, 32–35): Սարդարապատյան փորձում, համաձայն վերականգնողների նկարագրությունների, ավելացված հենքի թելը բնօրինակի հետ զուգահեռվում էր 1,5 -3 սմ խորությամբ և հավասարեցվում (նկ. 5ա): Պահպանվում էին միջնաթելերի շարքերը: Ուղղահայաց (հիմնաթել) ու հորիզոնական (միջնաթել) թելերն անցկացվում էին դարձերեսից: Դրանից հետո գորգն ամրացվում էր շրջանակին և խավը գործվում դիմերեսից՝ գորգագործական դանակի օգնությամբ: Հիմնաթելը, միջնաթելը անցկացնելուց և հանգույց անելուց հետո, գործող մի տարբերակ էր նաև գործված հատվածը թելի հորիզոնական անցումներով գորգին ամրացնելը: Փաթույթներն ու լայնակի եզրերը նույնպես վերականգնվում էին՝ ամբողջացնելով բացակա հատվածները: Առարկային արվող միջամտությունների սկզբունքի մասին վերոնշյալ բոլոր վերականգնողների ձևակերպումները արտահայտում են նույն բովանդակությունը. «Վերականգնումը համարվում է կատարյալ, երբ դժվար է լինում գտնել վերականգնված մասը: Այդ դեպքում կարելի է ասել, որ աշխատանքը կատարված է բարձր վարպետությամբ ու որակով» (Բազեյան 2011, 35):

Աշխատակիցներից շատերն ամռան երկու ամիսներին մասնակցում էին նաև գորգի հավաքածուի մաքրման, օդափոխման աշխատանքներին:

Կենտրոնի ավելի քան քսանամյա գործունեության վերջին տարիներին «2010 -ական թթ. նրանց [վերականգնողների] թվաքանակը կրճատվեց» (Ա. Պողոսյան), իսկ հետագայում լաբորատորիան դադարեց գոյություն ունենալ: ՀԱԹ գիտական գծով փոխտնօրեն Սվետլանա Պողոսյանը՝ մեջբերելով ՀՀ Էկոնոմիկայի նախարարի № 872-Ն հրամանը (19 սեպտեմբերի 2013 թ.), նշում է, որ վերականգնողների որակավորումները չէին համապատասխանում «Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների դասակարգչին»: Թանգարանում այժմ գորգի վերականգնման աշխատանքներ չեն իրականացվում:

Գորգի վերականգնման լաբորատորիայում ընդգրկված մեր բոլոր զրուցակիցներն առարկայի վերականգնման հմտությունները ձեռք են բերել թանգարանում: Այս հմտությունը հետագայում շատերի համար է կարևոր ձեռքբերում դարձել և այսօր էլ նրանցից շատերը շարունակում են զբաղվել այս աշխատանքներով:

Միջամտությունների նախընտրելի սկզբունքի մասին զրուցել ենք նաև ՀԱԹ «Թանգարանային առարկաների պահպանության բաժնի» վարիչ-գլխավոր ֆոնդապահ (2007 թ.-ից) Արուս Ասատրյանի հետ: Վերջինս նշում է. «Թանգարանային առարկայի վերականգնումը առարկայի վիճակի առկա խնդրի հետագա զարգա-

ցումը նվազագույնի հասցնելն է, հնարավորության դեպքում զրոյական դարձնելը՝ որքան որ հնարավոր է, որովհետև կենցաղավարված առարկաների դեպքում դա անելը շատ դժվար է, եթե հատկապես թանգարանային պահոցները չեն ունենում համապատասխան ջերմախոնավային պայմաններ, որովհետև շատ խնդիրներ զարգանում են դրա բացակայության պատճառով: Վերականգնումը բարդ և բազմաշերտ միջամտություն է՝ իր բազմաթիվ տեսակներով և աստիճաններով: Եվ այն չպետք է նպատակ ունենա առարկան անպայման ամբողջական դարձնել: Ժամանակակից թանգարանագիտության մեջ, կարծես թե առավել միտված են ամրակայմանը: Իհարկե, չի լինում այնպես, որ ամրակայման աշխատանքները վերականգնման տարրեր չպարունակեն, որովհետև միշտ ինչ-որ թերություններ են լինում, որ պետք է ուղղել, շտկել: Գորգի վերականգնումը նույնպես պահանջում է առարկայի վիճակի մանրազննին քննություն: Եվ եթե հնարավոր է ամրակայման միջոցով առարկային հաղորդել ամրություն, հաստատունություն, ինչը թույլ չի տա նոր խնդիրներ առաջանալուն, ուրեմն կարելի է այն ամրակայել: Գորգի վերականգնման ուշադրության արժանի օրինակներ են ներկայացնում պահպանվող գորգերի վրա արդեն եղած տանտիրուհիների կողմից արված վերականգնման կամ ամրակայման փորձերը, որոնք երբեմն շատ վարպետորեն են կատարված» (Ա. Ասատրյան, 21.04.2023 թ.):

Այս հարցի շուրջ զրուցել ենք նաև 1982–1989 թթ. «Գեղարվեստական գործվածքի» բաժնի նախկին գիտաշխատող (հետաքրքրությունը՝ տարազ), 1989–2005 թթ. թանգարանի գիտական քարտուղար, գիտական գծով փոխտնօրեն (2006 թ.-ից), պատմական գիտությունների թեկնածու Սվետլանա Պողոսյանի հետ: Վերջինս նշում է. «Գործվածքին անմիջական միջամտության կողմնակից չեմ: Մասնագետների շրջանում տարբեր մոտեցումներ կան իհարկե, բայց ես առավել պահպանության կողմնակից եմ, քան՝ միջամտության: Յուրաքանչյուր միջամտություն առարկայի կյանքին վնասում է: Առաջնային է լուծել պահպանության, մաքրման, ամրակայման խնդիրները: Կանոնավոր տարրական խնամքի դեպքում (քամահարել, դուրս բերել և այլն) այլևս կարիք չի լինի, որ անպայման վերականգնես: Առարկաները, որոնք շատ կարիք ունեն վերականգման և դու կարծես երկրորդ կյանք տաս դրանց, այդ ժամանակ կարող ես մտածել վերականգնման մասին, բայց ամեն ինչ պետք չէ վերականգնել: Այն առարկաները, որոնք ենթակա են ցուցադրության, շատ արժեքավոր, բացառիկ օրինակներ են և ունեն վերականգնվելու տեղեր՝ արդեն ահիրաժեշտ է, որ միջամտություն լինի: Առարկայի արժեքը չի ընկնում նրանից, որ վրան անցք կա՝ իր ժամանակաշրջանի հայելին է: Եթե վնասվածք ունի, ես կհամաձայնեմ [տալ] վերականգնման միայն այն դեպքում, երբ աշխատանքն արվի շատ որակյալ և պրոֆեսիոնալ: Վերականգնողը պետք է լուրջ պատրաստվածություն ունենա: Ցավոք չկան վերականգնման համահայկական հանձնաժողովներ, սա իսկապես խնդիր է» (Ս. Պողոսյան, 19.04.2023թ.):

Հայաստանի պատմության թանգարան

Հայաստանյան թանգարանային միջավայրում գորգի վերականգնման այժմ միակ լաբորատորիան գործում է Հայաստանի պատմության թանգարանում: Գոր-

գի հավաքածուն ընդգրկում է ավելի քան վեց հարյուր օրինակներ, որոնցից շատերը եզակի են ՀՀ թանգարանային ֆոնդում: Թանգարանում կատարվում են նաև այլ թանգարանների հավաքածուներում ընդգրկված գորգերի անմիջական միջամտություններ: Համաձայն արխիվային փաստաթղթերի՝ գորգերի վերականգնման աշխատանքները ՀՊԹ-ում սկսվել են 1980-ականների վերջին՝ առաջին «վերականգնողն» էր Անուշ Հովհաննիսյանը (առավել մանրամասն տես աղյուսակ 1, № 8):

Թանգարանում 2003–2021 թթ. «գորգի վերականգնող-կոնսերվատորն» էր Հասմիկ Խաչատրյանը, մասնագիտությամբ՝ «նկարիչ-դիզայներ» (առավել մանրամասն տես աղյուսակ 1, № 9): Հ. Խաչատրյանի հետ զրույցում պարզեցինք, որ առարկայի միջամտությունների իր պրակտիկայում «կարպետից է սկսվել ամեն ինչ»: Մինչ թանգարանում աշխատելը, վերջինս գորգի տեխնիկական նկարներ է պատրաստել, վերականգնման հմտություններ ձեռք բերել մասնավոր գորգավաճառի մոտ, դրանք զարգացրել է հարցազրույցներ վերցնելով «Մեգերյան կարպետ» ընկերության աշխատակիցներից:

ՀՊԹ-ում Հ. Խաչատրյանի աշխատանքային առաջին տարին սկսվել է կարպետներ վերականգնելով: Միջամտությունը կատարվել է առարկայի կառուցվածքի ամբողջական վերականգնման սկզբունքով: Գորգի պարագայում միջամտությունը կատարվում էր ուղղահայաց (հիմնաթել) և հորիզոնական (միջնաթել) թելեր անցկացնելով: Խավի թելը ընտրվում էր բնօրինակ առարկայի գույների հետ երանգի փոփոխությամբ. «որպեսզի այցելուն հասկանա, որ [առարկան] վերականգնվել է»: Համաշխարհային փորձին հղում կատարելով՝ Հ. Խաչատրյանը նշում է, որ «ճիշտ մոտեցում չէ՛ ամբողջական վերականգնումը, ճի՛շտ է պահպանելն այնպե՛ս, ինչպես որ կա, պարզապես պետք է փրկես, որ չզարգանա քայքայումը»:

Գորգի վերականգնման համար թելերը ձեռք էր բերվում «Մեգերյան կարպետ» ընկերությունից, երբեմն Հ. Խաչատրյանն ինքն էր ներկում հենքի թելերը՝ բնօրինակ հիմնաթելի համեմատությամբ նման երանգներ ստանալու համար: Հ. Խաչատրյանի փորձում ուղղահայաց թելերը տարբեր խորությամբ էին զուգակցվում բնօրինակ հիմքի թելերին (1,5–4 սմ), պահպանվում էին միջնաթելերի շարքերը: Փաթույթներն ու լայնակի եզրերը, ամրության նկատառումներից ելնելով, վերականգնվում էին ամբողջությամբ: Հ. Խաչատրյանը նշում է, որ իր աշխատանքի ընթացքում փոփոխվել է մոտեցումը (այնուամենայնիվ, միջմտության նպատակը նույնն էր), որոշում է կայացվել. «գործել միայն հիմնաթելերն ու միջնաթելերը՝ հետագա քայքայումից [գորգերը] փրկելու համար»:

2022 թ. մինչ օրս ՀՊԹ «գորգի վերականգնողն» է Լիլի Մամիկոնյանը, մասնագիտությամբ՝ «նկարիչ-դիզայներ» (մանրամասն տես աղյուսակ 1, № 10):

Լ. Մամիկոնյանը, որպես աշխատանքի սկզբունք, նշում է. «իմ մեթոդը մեղմ է գորգերի հանդեպ: Առարկան ինձ չեմ հարմարեցնում, ես եմ հարմարվում, պահում եմ ամեն մի հանգույցը՝ որը հնարավոր է»: Ի տարբերություն մասնավոր դաշտի իր փորձառության, շեշտում է՝ թանգարանում «վերականգնվում է հիմքը, միջնաթելը, խավը, եթե անհրաժեշտ է՝ մասամբ է ավելացվում, անցքերն են հիմ-

նականում վերականգնվում, որն ամենամեծ խնդիրն է, որովհետև անցքերից է շարունակվում քայքայման պրոցեսը»: Վերականգնման թելերը, որոնք ներկվում են բացառապես բնական նյութերով, ձեռք են բերվում «Վուլ վեյ» (“Wool way”) ընկերությունից, ինչպես վկայում է ընկերության գործադիր տնօրեն, գորգագործ, հնառճ գորգերի վերականգնող, բնական ներկման փորձագետ, ՀՀ ժողովրդական վարպետ Մարիամ Նալբանդյանը: Լ. Մամիկոնյանը նշում է, որ հիմնաթելի, միջնաթելի, խավի թելերի համար ընդհանուր առմամբ ունի ընտրության մեծ հնարավորություն: Եվ միայն բազմագույն հիմնաթելի դեպքում է, որ ինքն է մանում թելը:

Լ. Մամիկոնյանի պրակտիկայում ուղղահայաց թելերը 2–3 սմ խորությամբ են զուգակցվում բնօրինակ հիմքի թելերին: Արդյունքում ստացվում են պտույտի ոչ միագիծ կետեր (նկ. 5բ): Դա հնարավորություն է տալիս բնօրինակ հատվածի և ավելացված թելերի զուգահեռ մասերը չկենտրոնացնել նույն շարքում: Միջնաթելերի շարքերը անցկացվում են առարկայի միջնաթելերին զուգահեռ (բնօրինակ թելերին զուգակցելը՝ 2–3 սմ), պահպանվում են շարքերը: Փաթույթները և լայնակի եզրերը վերականգնվում են ամբողջությամբ՝ «պահպանության նկատառումներից ելնելով»: Այս մասում բացակայող հատվածների դեպքում, հիմնաթելերից և միջնաթելերից բացի, Լ. Մամիկոնյանը գործում է նաև հանգույցները՝ բնօրինակի հետ հնարավորինս համապատասխանեցնելով երանգները:

2022 թ. հոկտեմբերի 18-ին (կգործի մինչև 30.06.2023 թ.) «Մատենադարան» Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում բացվեց «Վերականգնումը Հայաստանում. ժամանակին ընդառաջ» խորագրով ցուցահանդեսը: Հայաստանի պատմության թանգարանի առարկաների շարքում ներկայացված էին ՀՊԹ «Թանգարանային առարկաների վերականգնման և ամրակայման լաբորատորիայի» մասնագետների աշխատանքները, որոնց թվում՝ ՀՊԹ Ա 11706/1 գորգը (Հայկական գորգարվեստ 2013, 26): Առարկային արված միջամտության մի հատվածում, որի հիմնաթելերն ու միջնաթելերը վնասված էին, Լ. Մամիկոնյանը անցկացնելով ուղղահայաց, ապա հորիզոնական թելերը, իրենց տեղում պահպանել էր ամբողջական հանգույցները (նկ. 6):

ՀՊԹ ազգագրության բաժնի գիտաշխատող, գորգագետ, պատմական գիտությունների թեկնածու Լիլիա Ավանեսյանը նշում է. «Յուրաքանչյուր թանգարանի պահոցում գտնվող գորգերը, գրեթե բոլո՛րը, կարիք ունեն ռեստավրացիոն միջամտության. մասնակի վերականգնման՝ հետագա քայքայման կանխման, կյանքը երկարացնելու նպատակով: Կարպետահյուս առարկաներն առավել բավարար վիճակում են, հավանաբար խավի բացակայության պատճառով, միջատներն ավելի շատ գորգն են վնասում: Առարկան ամբողջապե՛ս վերականգնելն իմաստ չունի, միգուցե անհրաժեշտ է անցքերի հենքաթելերը լցնել, մասնակի այլ միջամտություններ անել, եթե դա էլ հնարավոր չէ, կտավի վրա ամրացնել. նկարի տարբերակով, ինչպիսին որ մեզ հասել է: Կախված նրանից թե ինչ խնդիր պետք է լուծել. ցուցադրական վիճակի բերել, թե ուղղակի ապահովել պահպանությունը ուսումնասիրման համար: Եթե առարկայի խավը պահպանված չէ, միջամտության դեպքում կարող է խավը վերականգնվել, բայց եթե առարկան վերածվել է կտավի՝ ինչպե՞ս խավ՞ն ավելացնես»:

2007 – 2020 թթ. ՀՊԹ հնագիտության բաժնի ֆոնդապահ, 2021 – 2023 թթ. ՀՊԹ գլխավոր ֆոնդապահ Սոնա Հովսեփյանն՝ առարկային միջամտությունների նախընտրելի սկզբունքի մասին մեր հարցին ի պատասխան նշում է. «Յուրաքանչյուր թանգարան ունի իր մոտեցումը, որը կախված է առարկայի յուրահատկություններից: Վերականգնման ավանդական լաբորատորիաների դպրոցների ավանդույթներով՝ Հայաստանի պատմության թանգարանում առարկան վերականգնում ենք մաքրելով, մշակելով, լրացնելով բացակայող հատվածները: Տարբեր երկրներում մոտեցումը այլ է. այժմ շատ լաբորատորիաներում նյութը, հիմնականում, կոնսերվացնում են, միջամտություն կատարում են այն ժամանակ, երբ այն վատ վիճակում է և ենթակա է կործանման: Ցանկացած դեպքում, վերականգնման ընթացքում, մասնագետները հետևում են, որպեսզի նոր միջամտությունը տարբերվի, լինի դա բացակայող մասերի լրացում, թե երանգավորում: Գորգի պարագայում միջամտությունը կատարվում է առանց խավը գործելու՝ այնպես, որ վերականգնված հատվածը երևա» (Ս. Հովսեփյան, 21.04.2023 թ.):

ՀՊԹ տնօրեն Դավիթ Պողոսյանը, ոլորտի խնդիրների վերաբերյալ մեր զրույցում նշեց, որ միջամտությունների սկզբունքներն ու մեթոդները փոփոխվող դրույթներ են՝ պայմանավորված տեխնոլոգիական զարգացումներով, սերունդների առաջադրած լուծումներով և այլ հանգամանքներով: Մինչդեռ, միջամտության փորձը ենթադրում է հետազոտական աշխատանք: Այս համատեքստում կարևորվեց ակադեմիական կրթությամբ մասնագետների, մասնագիտական չափորոշիչների, ոլորտին վերաբերող քննարկումների դաշտի առկայության անհրաժեշտությունը (Դ. Պողոսյան, 20. 04. 2023 թ.):

ՀՀ մի քանի այլ թանգարաններում (աղյուսակ 2, № 4 – 9) գորգի վերականգնման աշխատանքներն իրականացվում են մասնավոր ընկերությունների և անհատ վերականգնողների հետ համագործակցությամբ: Այս համատեքստում մեր զրուցակիցները նշել են «Մեգերյան կարպետ» ընկերությունը, որը գորգի վերականգնման աշխատանքներ է կատարում 2003 թ.: Ընկերությունը ծառայություններ է մատուցել Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի թանգարաններին, Մարտիրոս Սարյանի տուն - թանգարանին, Երևան քաղաքի պատմության թանգարանին, Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանին: Համաձայն «Մեգերյան կարպետ» ձեռագործ գորգերի գործարանի արտադրություն գծով տնօրեն Լեոնիդ Անդրեասյանի հաղորդման, թանգարաններից բացի, այս ծառայությունից օգտվում են նաև անհատ սեփականատերեր, հավաքորդներ, ձեռնարկություններ: Համաձայն միջամտության սկզբունքի ընդհանրական նկարագրության՝ գործողությունը համապատասխանում է առարկայի ամբողջական վերականգնման սկզբունքին, որի շրջանակներում, հանգույցների բացակայության պարագայում՝ վերականգնվում է խավը, առարկայի բացակայող հատվածների դեպքում՝ նոր հիմնաթել, միջնաթել է անցկացվում, դրանից հետո շարք առ շարք գործվում են հանգույցները: Բացակայող հատվածի պատկերը վերականգնվում է գորգը վերականգնողի կամ նկարչի կողմից (Լ. Անդրեասյան, 30.03.2023 թ.):

2023 թ. իր գործունեությունն է սկսել «Հայաստանի վերականգնողների ասոցացիա» (ՀՎԱ) հասարակական կազմակերպությունը, որի նպատակը մշակութա-

յին արժեքների պահպանումն ու ոլորտում առկա խնդիրների լուծումն է: ՀՎԱ նախագահ, «Մատենադարան» Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի վերականգնման բաժնի վարիչ Գայանե Էլիազյանի խոսքով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ, վեր են հանվել ոլորտի խնդիրները: Ասոցիացիայի ծրագրերից է լինելու երիտասարդ կադրերի պատրաստումը: Ըստ ասոցիացիայի ներկայացուցիչ Լիլիթ Բաչաչյանի՝ հույս ունեն, որ ԿԳՄՍ նախարարության հետ՝ «Հայաստանի վերականգնողների ասոցիացիան» կստանձնի վերականգնողներին որակավորում շնորհելու հարցը, նաև նյութատեխնիկական միջոցների ձեռքբերումներ կունենան, նպատակ ունեն նաև ՀՀ-ում կազմակերպել դրանց արտադրության աշխատանքները և դառնալ մասնագիտական հարցերի քննարկումների հարթակ (ՀՎԱ ներկայացուցիչների ասուլիս, 17.04.23 թ.; Գ. Էլիազյան, 17.03.2023 թ.):

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ՝ ՀՀ փորձում, թանգարանային առարկայի (գորգ) նկատմամբ միջամտության պրակտիկայում ուրվագծվում են երեք տիպի թանգարաններ, որտեղ

1. գործել/գործում են վերականգնման լաբորատորիաներ, առկա են համապատասխան հաստիքներ («գորգի վերականգնող») (1980-ական թթ.–2013, ՀԱԹ, 1980-ական թթ.–մինչ օրս, ՀՊԹ),
2. լաբորատորիա և համապատասխան հաստիքներ առկա չեն, միջամտությունը կազմակերպվում է մասնավոր ընկերությունների, անհատների կամ այլ թանգարանների հետ համագործակցությամբ՝ պայմանագրային կարգով,
3. երբևէ առարկային միջամտություն չի իրականացվել:

ՀՀ թանգարանների փորձառությունը, ըստ գորգի միջամտության սկզբունքի, կարելի է բաժանել երկու խմբի. թանգարաններ, որտեղ կատարվել/կատարվում են՝

1. ամբողջական վերականգնում. ավելացվում են հիմնաթելերը, միջնաթելերը, գործվում են հանգույցները,
2. մասնակի վերականգնում. անցկացվում են միայն հիմնաթելերն ու միջնաթելերը:

Այս միջոցներին դիմելու նպատակը, համաձայն հաղորդումների, գլխավորապես կոնսերվացիայի խնդիրները լուծելն է. առաջին դեպքում դա կատարվում է առարկան բերելով «սկզբնական վիճակի»՝ առանց շեշտելու միջամտությունը, երկրորդ դեպքում ընդհակառակը՝ շեշտելով: Այնուամենայնիվ, ըստ էության, գործողությունների արդյունքն ավելին է, քան նպատակադրված խնդիրը:

Մեր դիտարկած վերականգնող մասնագետներից մի քանիսի մասնագիտացումն է «նկարիչ-դիզայներ»: Վերջիններս նշել են, որ գորգի տեխնիկական նկարներ անելը, առարկային ընդհանուր առմամբ ծանոթ լինելը էականորեն դյուրացրել է գորգի վերականգնման հմտություններ ձեռք բերելու գործընթացը: Ինչ վե-

բաբերում է գորգի վերականգնման գիտելիքների ձեռքբերմանը՝ դրա տրամադրող/ձևավորող հարթակը՝ ինչպես խորհրդային, այնպես էլ երրորդ հանրապետության տարիներին՝ մասնավոր դաշտն է, որտեղ աշխատանքի իշխող սկզբունքը ամբողջական, «քողարկող» վերականգնումն է: Կրթական հարթակների և միջամտության նպատակահարմար սկզբունքների ձևակերպումների բացակայության համապատկերում ուրվագծվում է, որ թանգարաններում մասնավոր ոլորտի փորձը, շատ հաճախ փոխառվում է ուղղակիորեն:

Վերականգնող մասնագետները (ոչ միայն թանգարանային առարկայի հետ առնչություններ ունեցած), որպես միջամտության արդյունք, մի շատ կարևոր հանգամանք են նշում. *որևէ վնասվածքի վերականգնման պարագայում, երկրորդ անգամ նույն հատվածը միջամտելու դեպքում մեծանում են միջամտության ծավալները և ի հակադրություն սրա՝ նվազում է առարկայի բնօրինակ հատվածի մասշտաբը*: Այս հանգամանքը ևս մեկ անգամ հիմնավորում է թանգարանային գորգի միջամտության նպատակահարմար, «բնօրինակությունը չկրճատող», ներկա և ապագայի հայացքներում՝ ընդունելի տարբերակներ քննարկելու կարևորությունը:

Դիտարկումների շրջանակներում քննարկվեցին գորգի խոշոր հավաքածուներ ունեցող թանգարաններից յուրաքանչյուրի՝ գորգի միջամտության մոտեցումները: Այնուամենայնիվ, տեղին ենք համարում մի օրինակ բերել, որը լավագույնս ընդգծում է վերականգնողների յուրաքանչյուր միջամտության/քայլի կարևորությունը և ոլորտում կարգավորումների և գործողությունների սահմաններ մշակելու անհրաժեշտությունը: Գորգի միջամտությունների պատմությունները դառնում են առարկայի պատմությունը և երբեմն՝ խմբագրվում թանգարաններում: Հավաքածուներում բազմաթիվ են անվնաս պահպանված գորգի հատվածները: Վերականգնողներից մեկի հաղորդմամբ՝ թանգարաններից մեկում առկա է եղել երկու մասից բաղկացած կարպետի մի օրինակ: Առարկան վերականգնվել է՝ «հաջողությամբ» միացվելով երկու հատվածները, այնպես, որ չերևա արված միջամտությունը: Մինչդեռ երևույթը առարկայի սոցիալ-մշակութային գործառույթը ցուցող մի կարևոր դրվագ էր, օրինակը այն ավանդույթի, ըստ որի գորգը տորքից հանելով, կտրվել-բաժանվել է զավակների միջև (Լ. Ավանեսյանը երևույթը հնագույն սովորույթի վերապրուկ է համարում, այս մասին առավել մանրամասն տե՛ս Ավանեսյան 2010, 393):

Միջազգային փորձի ընդհանրական դիտարկման արդյունքում կարելի է եզրակացնել, որ թեև հատկանիշներով ոչ նույնական՝ խավավոր գործվածքի միջամտությունների մեթոդաբանությունը տարբեր են, այնուամենայնիվ՝ սրանց, որպես մշակութային ժառանգություն հանդիսացող թանգարանային առարկաներ, միջամտության սկզբունքները/սահմանները ձևակերպված են և առնվազն արժանի են դիտարկման: ՀՀ թանգարանային երեսնամյա փորձառության պատմության ընթացքում գաղափարական փոփոխություններ են կատարվել. եթե նախկինում թանգարաններում հակված էին դիմել գորգի ամբողջական վերականգնմանը, ապա այժմ՝ դրանից բացի վերականգնման աշխատանքները կատարում են նաև մասնակիորեն, իսկ փորձագիտական մի քանի կարծիքների նժարը ամրակայման

կողմում է: Միջազգային փորձում առավել նպատակահարմար են համարում նվազեցնել գորգի կառուցվածքի միջամտությունները՝ սահմանափակելով միայն ամրակայման աշխատանքներով: Հույս ունենք, որ առարկայի միջամտության միջազգային փորձի առաջադրած սկզբունքների դիտարկումները և ՀՀ թանգարանային փորձառության նկարագրությունները կընդգծեն կրթական հարթակներ ձևավորելու, մասնագիտական քննարկումներ իրականացնելու, գործողությունների սահմաններ մշակելու և նպատակահարմար լուծումներ առաջադրելու անհրաժեշտությունը:

Հավելված

Աղյուսակ 1.

N°	ՀԱԹ և ՀՊԹ թանգարանների գորգի վերականգնման պրակտիկայում ներգրավված մասնագետների անունը և ազգանունը Լուսանկարը	Մասնագիտությունը, զբաղեցրած հաստիքը	Կենսագրական տվյալներ		Հարցազրույցի անցկացման ամսաթիվը, վայրը, տևողությունը, աշխատակիցների վերաբերյալ տվյալների աղբյուրները
1	**Մարինե Բազեյան**	գորգի վերականգնող, նկարիչ, գորգագործ, գորգագործության ուսուցչուհի	**կրթություն**		Հարցազրույցը՝ 25.03.2023 թ., ք. Երևան, տևողությունը՝ 1 ժամ, 58 րոպե: Տվյալները՝ համաձայն բանասացի հաղորդման, (Պողոսյան 2020), ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործեր», 1990 թ., Գիրք 1:
			1980 - 1982 թթ.	Գեղարվեստա-տեխնիկական ուսումնարան (ք. Երևան), Գորգի բաժին, որակավորումը՝ գորգագործ	
			2006 - 2014 թթ.	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ (ք. Գյումրի), բաժին՝ նկարչա - գծագրական	
			աշխատանք		
			1982 - 1988 թթ.	«Հայգորգ» արտադրական միավորում, նկարչի օգնական	
			1988 - 1990 թթ.	Հայոց ազգագրության պետական թանգարան, գորգի վերականգնող	
			1991 - 1993 թթ.	Մխիթար Սեբաստացի կրթահամալիր, գորգագործության ուսուցչուհի	
			2005 - 2009 թթ.	Թույլ լսող երեխաների N° 9 դպրոց (ք. Երևան), գորգագործության ուսուցչուհի	
			2013 - 2018 թթ.	«Մեգերյան կարպետ» ընկերություն, գորգի վերականգնող	
			2018 թ. - մինչև օրս	Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ, Գործվածքի ֆոնդի ֆոնդապահ	

2	**Ալվարդ Աթանեսյան**	գորգի վերականգնող	**աշխատանք**		Հարցազրույցը՝ 29.03.2023 թ., գ. Արաքս, տևողությունը՝ 31 րոպե: Տվյալները՝ համաձայն բանասացի հաղորդման, ՀԱԹ արխիվ, «Աշխատակիցների անձնական գործեր», 1989 թ., 1-ին մաս: Ա. Աթանեսյանը թանգարանում աշխատում է 1978 թվականից մինչ օրս:
			1989-2001 թթ.	Հայոց ազգագրության թանգարան, գորգի վերականգնող	
3	**Սոֆիա Գրիգորյան**	գորգի վերականգնող	**կրթություն**		Հարցազրույցը՝ 29.03.2023թ., գ. Արաքս, տևողությունը՝ 1 ժամ, 7 րոպե: Տվյալները՝ համաձայն՝ բանասացի հաղորդման, ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործեր», 2009 թ., Գիրք 3:
			1977-1979 թթ.	Ն. Օստրովսկու անվան ռուսական մանկավարժական ուսումնարան (ք. Երևան), մասնագիտությունը՝ արխիվավար	
			աշխատանք		
			1989–2009 թթ.	Հայոց ազգագրության թանգարան, գորգի վերականգնող	
4	**Քնարիկ Սարգսյան**	գորգի վերականգնող	**կրթություն**		Հարցազրույցը՝ 29.03.2023 թ. գ. Արաքս, տևողությունը՝ 54 րոպե: Տվյալները՝ համաձայն բանասացի հաղորդման, ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործեր», 2002–2003 թթ.:
			1978-1982 թթ.	Տեխնոլոգիական տեխնիկում (ք. Հոկտեմբերյան), մասնագիտությունը՝ տեխնիկ-տեխնոլոգ	
			աշխատանք		
			1985-1989 թթ.	«Հայգորգ» արտադրական միավորում, տնայնագործ գորգագործ	
			1994-2002 թթ.	Հայոց ազգագրության թանգարան, գորգի վերականգնող	
5	**Լիանա Գասպարյան**	գորգի վերականգնող	**աշխատանք**		Հարցազրույցը՝ հեռախոսազան-գով, 12.04.2023 թ., գ. Արաքս, տևողությունը՝ 29 րոպե: Տվյալները՝ համաձայն բանասացի հաղորդման, ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործեր», 2014 թ., Գիրք 7:
			1998/90-2013 թթ.	Հայոց ազգագրության թանգարան, գորգի վերականգնող	

6	**Գոհարիկ Սարգսյան**	գորգի վերականգնող	**կրթություն**		Հարցազրույցը՝ 29.03.2023 թ. գ. Արաքս, տևողությունը՝ 54րոպե: Տվյալները՝ համաձայն բանասացի հաղորդման, ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործեր», 1993 թ.:
			1978 - 1981 թթ.	Տեխնոլոգիական տեխնիկում (ք. Հոկտեմբերյան), մասնագիտությունը՝ տեխնիկ - տեխնոլոգ	
			աշխատանք		
			1989 - 1994 թթ.	Հայոց ազգագրության թանգարան, գորգի վերականգնող	
7	**Հակոբ Ասպոյան**	գորգի վերականգնող			Հարցազրույցը՝ 18.04.23 թ., ք. Երևան, տևողությունը՝ 1 ժամ, 25 րոպե:
8	**Անուշ Հովհաննիսյան**	գորգի վերականգնող	**կրթություն**		Չենք կարողացել կապ հաստատել Ա.Հովհաննիսյանի հետ: Տվյալները՝ համաձայն ՀՊԹ Արխիվ, «Թանգարանի աշխատակիցների անձնական գործեր. Անուշ Հովհաննիսյան»:
			1981 - 1985 թթ.	Գեղարվեստի մանկական դպրոց (ք. Արտաշատ), մասնագիտությունը՝ նկարիչ	
			1986 - 1988 թթ.	N° 14 միջնակարգ պրոֆտեխնիկական ուսումնարան (ք.Երևան), մասնագիտությունը՝ 4-րդ կարգի վերականգնող (գորգ)	
			աշխատանք		
			1988 - 2000 թթ.	Հայաստանի պատմության պետական թանգարան, «Մետաղյա առարկաների, գործվածքի, գրքերի, փաստաթղթերի, նկարների վերականգնման և կոնսերվացման արհեստանոցի» գորգի վերականգնող:	
9	**Համիկ Խաչատրյան**	նկարիչ-դիզայներ, գորգի վերականգնող-կոնսերվատոր	**կրթություն**		Հարցազրույցը՝ տեսազանգով, 31.03.2023 թ., ԱՄՆ, տևողությունը՝ 57 րոպե: ՀՊԹ Արխիվ, «Թանգարանի աշխատակիցների անձնական գործեր»:
			1996 – 2001 թթ.	Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական ուսումնարան (ք.Երևան), որակավորումը՝ նկարիչ-ձևավորող	
			աշխատանք		
			2001 թ. - վեց ամիս	Մասնավոր ընկերություն, գորգի նկարիչ	
			2003 - 2021 թթ.	Հայաստանի պատմության թանգարան, «Թանգարանային առարկաների վերականգնման» բաժին, գորգի վերականգնող - կոնսերվատոր	

10	**Լիլի Մամիկոնյան**	նկարիչ-դիզայներ, գորգի վերականգնող	**կրթություն**		Հարցազրույցը՝ 14.03.2023 թ. ք. Երևան, տևողությունը՝ 55րոպե: Տվյալները՝ համաձայն՝ բանասացի հաղորդման, ՀՊԹ Արխիվ, «Թանգարանի աշխատակիցների անձնական գործեր»:
			1996-2001 թթ.	Հայաստանի Գեղարվեստի պետական ակադեմիա (ք.Երևան), Դեկորատիվ կիրառական արվեստի դիզայն (գորգ)	
			աշխատանք		
			2000-2004 թթ.	«Ինտեռֆոռմատ», նկարիչ-դիզայներ	
			2004-2004 թթ.	«Արմեն կարպետ» ԲԲԸ, նկարիչ-դիզայներ	
			2005-2008 թթ.	«Պրոմտեխինպեքս» ՍՊԸ, գորգի վերականգնող	
			2008-2010 թթ.	Երևան քաղաքի պատմության թանգարան, գորգի վերականգնող	
			2010-2012 թթ.	Հ. Թումանյանի թանգարան (ք. Երևան), գորգի վերականգնող	
			2018-2020 թթ.	«Մետաքսի ճանապարհ» հյուրանոց, գորգի վերականգնող	
			2020 թ.-մինչ օրս	"Wool way» ընկերություն, գորգի վերականգնող	
			2022 թ.-մինչ օրս	Հայաստանի պատմության թանգարան, գորգի վերականգնող	

Աղյուսակ 2.

N°	Հաստատության անվանումը	Զրուցակցի անունը, ազգագունը	Զրուցակցի զբաղեցրած պաշտոնը	Հարցազրույցի անցկացման ամսաթիվը
1	Հայաստանի պատմության թանգարան	Դավիթ Պողոսյան	Տնօրեն	20.04.2023 թ.
2		Սոնա Հովսեփյան	Գլխավոր ֆոնդապահ	21.04.2023 թ.
3	Հայոց ազգագրության թանգարան	Աշխունջ Պողոսյան	Գիտական գծով փոխտնօրեն (1989–1996 թթ.), ՄԱՓԿ փորձագետ	28.03.2023 թ.
4	Մայր աթոռի Սուրբ Էջմիածնի թանգարաններ	Հայր Ասողիկ Կարապետյան	Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների և Արխիվի տնօրեն	30.03.2023 թ.
5	Երևան քաղաքի պատմության թանգարան	Արմինե Սարգսյան	Տնօրեն	17.03.2023 թ.
6	Հովհաննես Ծարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարան	Լուսինե Թորոյան	Տնօրեն	21.03.2023 թ.
7	Սերգեյ Փարաջանովի թանգարան	Անահիտ Միքայելյան	Տնօրեն	17.03.2023 թ.
8		Մարիաննա Մանուչարյան	Գլխավոր ֆոնդապահ	
9	Հովհաննես Թումանյանի թանգարան (ք. Երևան)	Մարինե Բաղդասարյան	Գլխավոր ֆոնդապահ	17.03.2023 թ.
10	«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ	Լիանա Գևորգյան	Գլխավոր ֆոնդապահ	31.03.2023 թ.
11	Հայաստանի ազգային պատկերասրահ	Սամվել Հովհաննիսյան	Փոխտնօրեն	20.04.2023 թ.
12	Շիրակի երկրագիտական թանգարան	Մերուժան Մինասյան	Տնօրեն	22.03.2023 թ
13	Լոռի-Փամբակ երկրագիտական թանգարան	Արմինե Ավդալյան	Տնօրեն	22.03.2023 թ.

14	Գեղարքունիքի երկրագիտական թանգարան	Բյուրեղիկ Հովեյան	Տնօրեն	22.03.2023 թ
15	Եղեգնաձորի երկրագիտական թանգարան	Կարինե Ստեփանյան	Ֆոնդապահ	22.03.2023 թ.
16	Հրազդանի երկրագիտական թանգարան	Գարիկ Բագրատյան	Գլխավոր ֆոնդապահ	22.03.2023 թ.
17	Կապանի երկրագիտական թանգարան	Ալյոշա Հայրապետյան	Տնօրեն	22.03.2023 թ.
18	Հովհաննես Թումանյանի տուն - թանգարան (Դսեղ)	Ռոզա Ղազումյան	Վարիչ	22.03.2023 թ.
19	Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան	Անի Նազարյան	Տնօրեն	22.03.2023 թ.
20	«Մատենադարան» Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Հայաստանի վերականգնողների ասոցացիա	Գայանե Էլիազյան	Վերականգնման բաժնի վարիչ, նախագահ	17.03.2023 թ.
21	Հայաստանի պատմության թանգարան	Լիլիա ավանեսյան	Ազգագրության բաժնի գիտաշխատող	31.03.2023 թ.
22	Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության թանգարան	Սվետլանա Պողոսյան	Գիտական գծով փոխտնօրեն	19.04.2023 թ.
23		Արուս Ասատրյան	Թանգարանային առարկաների պահպանության բաժնի վարիչ - գլխավոր ֆոնդապահ	21.04.2023 թ.
24	«Մեգերյան կարպետ» ձեռագործ գորգերի գործարան	Լեոնիդ Անդրեասյան	Արտադրություն գծով տնօրեն	30.03.2023 թ.
25	«Վուլ վեյ» (“Wool way”) ընկերություն	Մարինե Նալբանդյան	Գործադիր տնօրեն, գորգագործ, հնաոճ գորգերի վերականգնող, բնական ներկման փորձագետ, ՀՀ ժողովրդական վարպետ	01.04.2023 թ.
26	Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն	Մարիամ Ազատյան	Գործվածքի փորձագետ	07.04.2023 թ.
27	N° 2 Հանրապետական հատուկ կրթահամալիր, Ժողովրդական ստեղծագործության կենտրոն	Աստղիկ Ամիրբեկյան	Գորգագործության ուսուցչուհի, գիտաշխատող, գորգի, կարպետի վերականգնող, նկարիչ	01.04.2023 թ.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

ՀԱԹ արխիվ, «Աշխատակիցների անձնական գործեր», 1989 թ., 1-ին մաս:

ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործեր», 1990 թ., Գիրք 1:

ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործեր», 1993 թ.:

ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործեր, Գիրք 2:

ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործերի», 2002–2003 թթ.:

ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործեր», 2009 թ., Գիրք 3:

ՀԱԹ արխիվ, «Աշխատանքից ազատվածների անձնական գործեր», 2014 թ., Գիրք 7:

ՀԱԹ 3705:

ՀԱԹ 3839:

ՀՊԹ արխիվ, «Թանգարանի աշխատակիցների անձնական գործեր». Անուշ Հովհաննիսյան, Հասմիկ Խաչատրյան, Լիլի Մամիկոնյան:

ՀՊԹ Ա 9263:

«Թանգարանների և Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-794–21.05.2015-ԳԿ-010/0):

ՀՀ Էկոնոմիկայի նախարարի N 872-Ն հրամանը (19 սեպտեմբերի 2013 թ.):

Սպուտնիկ Արմենիա, Հայաստանի վերականգնողների ասոցիացիայի ներկայացուցիչների ասուլիս, 17.04.23 (19.04.2023 թ., 12:00):

Ahead of his time. The collecting vision of George Hewitt Myers, The George Washington university museum, The textile museum (14.04.2023թ., 10:30).

Գրականություն

ԱՎԱՆԵՍՅԱՆ 2010 – Ավանեսյան Լ., Գորգի ծագումը և ծիսական կիրառությունը, «Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում», Երևան, 2010, էջ 389–399:

ԲԱԶԵՅԱՆ 2011 – Բազեյան Մ., Հայկական գորգի վերականգնման մեթոդները, «Հայկական գորգագործական մշակույթը» Հանրապետական առաջին գիտաժողովի նյութերի ժողովածու. 18–19 նոյեմբեր 2011, Երևան, 2011, էջ 32–35:

ԳԵՎՈՐԳՅԱՆ 2013 – Գևորգյան Լ., Գորգագործ թանգարանային առարկաների պահպանության և ցուցադրման առանձնահատկությունները, «Հայկական հանգույց. գորգարվեստի ավանդույթները» միջազգային գիտաժողով, Երևան, 2013, էջ 126 -134:

ԼԱԼԱՅԱՆ 1903 – Լալայան Ե., Ազգագրական հանդես., Գիրք X, Թիֆլիս, 1903:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԱՐՎԵՍՏ 2013 – «Հայկական գորգարվեստ. XVIII–XXդդ.», ՀՊԹ գորգերի ալբոմ-կատալոգ, Երևան, 2013:

ՊՈՂՈՍՅԱՆ 2020 – Պողոսյան Ս., Թաղիքագործության, ժանեկագործության և կարպետագործության մոռացվող ավանդույթների վերածնունդը, Երևան, 2020:

ՊՈՂՈՍՅԱՆ, ԱՍԱՏՐՅԱՆ, 2011 – Պողոսյան Ս., Ասատրյան Ա., Հայոց ազգագրության թանգարանի «Գործվածք» ֆոնդի պահպանության փորձից, «Հայկական գորգագործական մշակույթը» Հանրապետական առաջին գիտաժողովի նյութերի ժողովածու. 18–19 նոյեմբեր 2011, Երևան, 2011, էջ 75–83:

ՔԻԻՐՏԵԱՆ 1947 – Քիւրտեան Յ., Գորգը Հայոց մօտ, Վենետիկ, Ս.Ղազար, 1947:

BREEZE 2000 – Breeze C., A survey of American tapestry conservation techniques, American textile history museum, Textile conservation center, Lowell, Massachusetts, 2000.

GUICHEN 1999 – Guichen de Gaël, Preventive conservation: a mere fad or far-reaching change?, Museum International, UNESCO, Paris, 1999.

HUTCHINSON 1991 – Hutchinson B., From Restoration to Conservation: Parallels Between the Tradition of Tapestry Conservation and Carpet Conservation, “Textile Museum Journal”, Volumes 29 and 30 (1990–1991), The Geroge Washington University Museum and The Textile Museum, Washington, 1991, pp. 9–12.

KOBBÉ 1910 – Gustav Kobbé, Rembrandts of the Loom: The Rug Exhibition in the Metropolitan Museum of Art, “The Lotus Magazine”, Volume 1, № 10, 1910, pp. 7–18.

KOYOUNIAN S., KOYOUNIAN A. 2013 – Koyounian S., Koyounian A., On Issues of Antique Rug Expertise, Restoration and Conservation, Armenian knot. Tradition of carpet weaving art, International conference, Yerevan, 2013, pp. 232–233.

MCCARTHY 2019 – McCarthy A., Compilation on pile rugs untying restoration from current conservation practices, University of Delaware, 2019

SHABICA, LUMMIS 2018 – Shabica R., Lummis T., Collections Management Policy, The Geroge Washington University Museum and The Textile Museum, Washington, 2018.

STONE 2010 – Stone P. F., Oriental rug repair, Step – by - step Reknotting and Reconstruction, Care and Preservation, London, 2010.

AIC FAIC. "Code of Ethics of the American institute for conservation of historic & artistic works", 1994, (01.04.2023 թ., 13:00):

ICON 2020 – ICON, The institute of conservation, Conservation or Restoration, (05.04.2023 թ., 10:00):

ICOM 2017 – "ICOM. Code of ethics for Museums", (01.04.2023 թ., 20:00):

Hasmik Petrosyan
History Museum of Armenia
hasmikpetrosyanmuseum@gmail.com

PRINCIPLES OF CARPET RESTORATION: INTERNATIONAL STANDARDS, ARMENIAN PRACTICE

Keywords: carpet, museum object, restoration, conservation, principles of intervention, international experience, museums of the Republic of Armenia.

The principles of carpets' structural intervention are formulated by conservation institutes and advisory institutions as cultural heritage and museum objects. The article presents foreign experience of intervention on this issue. In this context, our task was to research the experience of the museums in Armenia. They have more than thirty years of experience in this field. Accurate and partial restoration were carried out in the Soviet and post-Soviet attempts. The experience of carpet restoration is based on knowledge developed in the private field. In general, the problems of the carpet intervention are mainly related to education, necessity of professional discussions and boundaries developing to propose appropriate solutions.

Асмик Петросян
Музей истории Армении
hasmikpetrosyanmuseum@gmail.com

ПРИНЦИПЫ РЕСТАВРАЦИИ КОВРОВ: МЕЖДУНАРОДНЫЕ СТАНДАРТЫ, АРМЯНСКИЙ ОПЫТ

Ключевые слова: ковер, музейный предмет, реставрация, консервация, принципы вмешательства, международный опыт, музеи Республики Армения.

Принципы структурного вмешательства ковров сформулированы институтами сохранения и консультативными учреждениями как культурное наследие и музейные объекты. В статье представлен зарубежный опыт вмешательства по данному вопросу. В этом контексте нашей задачей было изучить опыт музеев Армении. Они имеют более чем тридцатилетний опыт работы в этой области. Точная и частичная реставрация проводилась в советские и постсоветские периоды. Опыт реставрации ковров основан на знаниях, полученных в частной сфере. В целом, проблемы коврового вмешательства в основном связаны с образованием, необходимостью профессиональных дискуссий и установлением границ для предложения соответствующих решений.

Համլիկ Պետրոսյան

Գորգի վերականգնման սկզբունքները.
Միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ

Նկ.1. Գորգ, 20-րդ դարի սկիզբ, Լոռի, բուրդ: ՀԱԹ 3705:

Նկ.2. գորգ, 1914 թ., Գուգարք, բուրդ: ՀԱԹ 3839:

Նկ. 3. «Ֆինանսական փնակներից» մեկը (հասցե՝ Երվանդ Լալայան փողոց։ Ներկայումս փողոցը անվանակոչված է ազատամարտիկ Վանիկ Ալիխանյանի անունով)։

Նկ. 4. Ցուցադրության մեջ (2-րդ հարկ, գորգերի սրահ, երկրորդ խորան) գորգի վերականգնման աշխատանքներից մի դրվագ. լուսանկարի հեղինակը կանադահայ զբոսաշրջիկ է, ով վերադառնալով Կանադա լուսանկարի օրինակներն ուղարկել է թանգարան՝ գորգի վերականգնողներին։ Նկարը տրամադրել են Սոֆիա Գրիգորյանը և Լիանա Գասպարյանը։ Լուսանկարում՝ երկրորդ շարքում. ձախից առաջինը՝ Ս. Գրիգորյան, հաջորդ երկուսը՝ սրահի հսկիչներ, մյուսը՝ կանադահայ զբոսաշրջիկ, առաջին շարքում՝ ձախից առաջինը՝ Լ. Գասպարյան, մյուս երկուսը՝ անհայտ, մյուսը՝ Քնարիկ Սարգսյան։



Նկ.5 ա,բ. Ուղղահայաց թելերի՝ հիմնաթելի անցկացման տեխնիկական գծագիր:

նկ.6. Գորգ, գ.Գլաձոր, Եղեգնաձորի տարածաշրջան, 20-րդ դարի սկիզբ, բուրդ: ՀՊԹ Ա 9263: